

04708163

ՀՀ Արմավիրի մարզի
«Վաղարշապատի Ռ.
Պատկանյանի անվան N9
հիմնական դպրոց» ՊՈԱԿ
հեռ. +374231 4-29-66
ք. Էջմիածին
Օրջոնիկիձե27/ 1
Էլ. փոստ. patkanyan9@mail.ru



04708163

Армавирская область РА
ГНТУ “Осн. школа N 9
им. Р. Патканяна
г. Вагаршапат”
тел. +374231 4-29-66
г. Вагаршапат
ул. Орджоникидзе27/ 1
эл. почта: patkanyan9@mail.ru

N 113

09. 04. 2021

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Մարգարետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ << Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N9 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարել է մրցույթ ռուսերենով ուսուցմամբ դասարանի դասվարի (15 դասաժամ) ուսուցչի թափուր պաշտոնի համար :

Կից ուղարկում եմ հայտարարության տեքստը:

Աղդիր 1 էջ:



Տնօրեն

Մ.Մամվեյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսերենով ուսուցմամբ դասարանի դասվարի (15 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1). մեկ լուսանկար 3X4 չափի>
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պաճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Ռ. Պատկանյանի անվան հ.9 հիմնական դպրոցում, հասցեն՝ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Օրջոնիկիձե 27/1

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0231) 4-29-66, (093) 19-85-34
հեռախոսահամարներով: